ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ
ՀՐԱՄԱՆ

«15» փետրվար 2021թ. No 436 - Ա

ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍԱՅԻՆ ՀԻՎԱՆԴՈՒԹՅԱՆ (COVID-19) ԴԵՄ ՊԱՏՎԱՍՏՈՒՄՆԵՐԻ ՌԻՍԿԻ ԽՄԲԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 24-րդ հոդվածի 2-րդ մասը, Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի դեկտեմբերի 17-ի N 2129-Ն որոշմամբ հաստատված «2021-2025 թվականների իմունականխարգելման ազգային ծրագիրը և իմունականխարգելման ազգային ծրագրի գերակա միջոցառումների ցանկը» պետական ծրագիրը, ինչպես նաև «Հայաստանի Հանրապետության իմունականխարգելման ազգային փորձագիտական խորհրդատվական հանձնաժողովի» առաջարկությունը (2021 թվականի հունվարի 15-ի նիստի արձանագրություն), ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի թիվ 728-Լ որոշման հավելվածով հաստատված Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության կանոնադրության 18-րդ կետի 20-րդ ենթակետով.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Հաստատել.

1) Կորոնավիրուսային հիվանդության (COVID-19) դեմ պատվաստումների ռիսկի խմբերը՝ համաձայն հավելվածի:

2) Սույն հրամանի կատարման հսկողությունը հանձնարարել Առողջապահության նախարարի առաջին տեղակալ Լենա Նանուշյանին:

Ա. ԱՎԱՆԵՍՅԱՆ

Հավելված
Առողջապահության նախարարի
2021 թվականի փետրվարի 15-ի N 436-Ա հրամանի

ՌԻՍԿԻ ԽՄԲԵՐ
ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍԱՅԻՆ ՀԻՎԱՆԴՈՒԹՅԱՆ (COVID-19) ԴԵՄ ՊԱՏՎԱՍՏՈՒՄՆԵՐԻ

Կորոնավիրուսային հիվանդության (COVID-19) դեմ պատվաստումների ռիսկի խմբերն են.

1) բնակչության սոցիալական պաշտպանության հաստատությունների բնակիչներ և աշխատողներ.

2) բուժաշխատողներ՝ ավագ, միջին և կրտսեր.

3) 65 տարեկան և բարձր տարիքի անձինք՝ սկսելով 80 տարեկան և բարձր տարիքի անձանցից.

4) 16-64 տարեկան քրոնիկ հիվանդություններ ունեցող անձինք.

5) հղիներ.

6) իմունային անբավարարությամբ անձինք:»:

(Հավելվածը խմբ. է 24.07.2024 N4024–Ա)